

«ՀԱՍԱՉԱՅՆԵՑՎԱԾ Է»

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ վարչության  
«12» մայիսի 2006թ.  
թիվ 01/84-283Լ որոշմամբ

Վարչության նախագահ՝

*Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ* \_\_\_\_\_

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ խորհրդի  
«30» հունիսի 2006թ.  
թիվ 127Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ՝

*Կ. ՍԱՖԱՐՅԱՆ* \_\_\_\_\_



«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**Կ Ա Ր Գ**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Արդշինհնվեստբանկ» ՓԲԸ ավանդների ընդունման կարգով (այսուհետ՝ Կարգ) կանոնակարգվում են «Արդշինհնվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից բանկային ավանդների ընդունման, տոկոսների հավելագրման, վճարման կարգն ու պայմանները:

1.2. Բանկի կողմից գործող ավանդները, ավանդների սպասարկման պայմանները, այն է՝ ժամկետը, տոկոսների վճարման հաճախականությունը, գումարը, ավանդի արժույթը, վերադարձման պայմանները, ինչպես նաև տոկոսադրույքները սահմանվում են Բանկի Վարչության որոշումներով: Ավանդների հետ կապված անհատական սակագներն ու տոկոսադրույքները, ինչպես նաև այդ ավանդների սպասարկման պայմանները սահմանվում են Բանկի Վարչության նախագահի կարգադրություններով:

(կետը փոփ. Բանկի խորհրդի 13.12.2008թ. թիվ 289Լ որոշմամբ)

1.3. Ստորև բերված հասկացությունները սույն Կարգում օգտագործվում են հետևյալ իմաստով.

**Բանկային ավանդ՝** Ավանդատուի կողմից Բանկին տրամադրված դրամական գումար է (կանխիկ կամ անկանխիկ), որի տրամադրման պայմանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված բանկային ավանդի պայմանագրի համար սահմանված պահանջներին, և որը չի տրամադրվել այն օգտագործելու ռիսկն Ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ կամ որպես գույք, գույքային իրավունքներ վարձակալելու կամ ձեռք բերելու, աշխատանք կամ ծառայություն մատուցելու հատուցում կամ որպես պարտավորության ապահովման միջոց:

**Ավանդատու՝** 14 տարին լրացած ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ քաղաքացի, իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր:

**Բանկային ավանդի պայմանագիր՝** Պայմանագիր, որով Բանկն ընդունում է Ավանդատուից ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը (ավանդը), պարտավորվում է Ավանդատուին վերադարձնել ավանդի գումարը և պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանից:

**Տոկոսներ՝** Բանկի կողմից Ավանդի օգտագործման համար հավելագրվող դրամական գումար, որը Բանկը պարտավորվում է վճարել Ավանդատուին՝ Բանկային ավանդի պայմանագրով նախատեսված պայմաններին ու սույն Կարգի դրույթներին համապատասխան:

**Ավանդային պայմանագրի լրացում՝** Բանկի կողմից սահմանված ձևի գրավոր համաձայնագիր, որը կնքվում է Բանկի և Ավանդատուի միջև գործող Բանկային ավանդը երկարաձգելու և/կամ այլ պայմաններ փոփոխելու դեպքում:

**Երրորդ անձ՝** ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ քաղաքացի կամ իրավաբանական անձ, որի օգտին Բանկում ներդրվել է որոշակի գումար:

**Պատասխանատու մասնագետ՝** Բանկային ավանդի պայմանագիր կազմող Բանկի աշխատակից:

## 2. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ, ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

2.1. Բանկը Ավանդ է ընդունում Հայաստանի Հանրապետության դրամով և ազատ փոխարկելի արտարժույթով՝ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ ձևով:

2.2. Ավանդը վերադարձվում է Ավանդատուին այն արժույթով, ինչպիսի արժույթով ներդրվել է ավանդը:

2.3. Բանկային ավանդի պայմանագրի գրավոր ձևը համարվում է պահպանված, եթե կնքվել է գրավոր պայմանագիր, և բանկային ավանդ մուծելը հավաստված է ՀՀ ԿԲ սահմանված փաստաթղթով կամ ՀՀ ԿԲ սահմանված վավերապայմաններ պարունակող բանկային գրքույկով կամ բանկային կամ դեպոզիտային սերտիֆիկատով:

2.4. Բանկային ավանդի պայմանագրում պարտադիր նշվում են Ավանդի չափը, ավանդային հաշվի համարը, Ավանդի ներդրման ժամկետը, տարեկան տոկոսադրույքը, երկարաձգման կարգը և այլ էական պայմաններ:

2.5. Ավանդ մուծված հաշվով ընթացիկ բանկային գործառնություններ չեն իրականացվում և այդ հաշվի վրա չեն տարածվում բանկային հաշվի մասին կանոնները:

2.6. Բանկային ավանդի պայմանագրով իրավաբանական անձինք իրավունք չունեն իրենց ավանդներում (դեպոզիտներում) եղած դրամական միջոցները փոխանցել այլ անձանց: Իրավաբանական անձանց կողմից նման պահանջի դեպքում իրավաբանական անձի վճարման

հանձնարարականի կատարումը Բանկի կողմից մերժվում է ՀՀ «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» օրենքով սահմանված կարգով:

2.7. Բանկն Ավանդը տնօրինում է իր հայեցողությամբ:

2.8. Բանկային ավանդը կարող է հանդիսանալ Ավանդատուի կողմից Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման ապահովման միջոց: Այն դեպքում, եթե Ավանդատուն պահանջում է իրեն վերադարձնել ավանդը Ավանդային պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան, ապա Բանկն իրավունք ունի Ավանդատուից պահանջել վաղաժամկետ կատարելու նաև իր կողմից այդ պահին ձևավորված պարտավորությունը: Նման պահանջը Ավանդատուի կողմից չբավարարվելու դեպքում Բանկը ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան իր իրավունքների ինքնապաշտպանության եղանակով ավանդներում եղած դրամական միջոցները ուղղում է Ավանդատուի կողմից Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորության կատարմանը:

2.9. Ավանդատուն կարող է Բանկի նկատմամբ Բանկային ավանդի պայմանագրով ունեցած իր պահանջի իրավունքը զիջել այլ անձի միայն Բանկի գրավոր համաձայնությամբ:

2.10. Քաղաքացին իրավունք ունի Ավանդի, ինչպես նաև տոկոսների օգտագործման և/կամ տնօրինման իրավունքը փոխանցել այլ անձի միայն նոտարական կարգով վավերացված լիազորագրի կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով դրան հավասարեցված այլ մարմինների կողմից հաստատված լիազորագրի հիման վրա:

2.11. Ավանդատուն կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ լիազորված անձը կնքում է Բանկային ավանդի պայմանագիրը նախօրոք ծանոթ լինելով սույն Կարգի դրույթներին, որը հավաստվում է Բանկային ավանդի պայմանագրի ստորագրմամբ:

2.12. Բանկային ավանդի պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության, անձնագրի կորստի կամ փոփոխության դեպքում Ավանդատուն պարտավոր է անհապաղ ներկայանալ Բանկ կամ այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին կապի բոլոր հնարավոր միջոցներով՝ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու նպատակով:

2.13. Եթե Ավանդատուն գրավոր հայտարարում է իր Բանկային ավանդի պայմանագրի օրինակի կորստի մասին, ապա Բանկը նրան տրամադրում է բանկի օրինակի պատճենը, որի վրա գրառվում է պատճենի տրամադրման ամսաթիվը, մասնաճյուղի կառավարչի, գլխավոր հաշվապահի, Պատասխանատու մասնագետի (Հաճախորդների սպասարկման վարչությունում՝ Հաճախորդների սպասարկման վարչության պետի, Ֆիզիկական անձանց սպասարկման բաժնի պետի /Կորպորատիվ հաճախորդների սպասարկման բաժնի պետի/ և Պատասխանատու մասնագետի) ստորագրությամբ՝ վավերացված կնիքով:

2.14. Բանկը պարտավորվում է Ավանդի ընդունման պայմաններում յուրաքանչյուր անգամ կատարված փոփոխությունները հրապարակել՝ համաձայն գործող օրենսդրության:

2.15. Բանկի և նրա հետ կապված անձանց ավանդային գործարքները հաստատում է Բանկի խորհուրդը՝ Բանկի վարչության նախագահի ներկայացմամբ՝ համաձայն Բանկի և նրա հետ կապված անձանց միջև գործարքների կնքման ու հաստատման ընթացակարգի:

2.16. Ավանդի վերադարձն ապահովված է օրենքով նախատեսված եղանակներով և սահմանված կարգով:

### **3. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՏՈԿՈՍ: ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ԳՈՒՄԱՐԻՆ ՏՈԿՈՍՆԵՐ ՀԱՎԵԼԱԳՐԵԼՈՒ ՈՒ ԴՐԱՆՔ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

3.1. Բանկն ավանդի վրա հաշվարկված տոկոսները վճարում է ՀՀ դրամով:

3.2. Բանկն ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրում է ավանդը Բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

3.3. Ավանդի գումարից տոկոսներն Ավանդատուին վճարվում են Բանկային ավանդի պայմանագրով սահմանված ժամկետներում՝ ավանդից առանձին, իսկ տոկոսները Բանկային ավանդի պայմանագրով սահմանված ժամկետում Ավանդատուի կողմից չպահանջելու դեպքում, դրանք ավանդին չեն ավելանում, այլ փոխանցվում են Ավանդատուի ցպահանջ հաշվին և վճարվում են Ավանդատուին վերջինիս առաջին իսկ պահանջով:

3.4. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին կանխիկ մուտքագրված միջոցները Ավանդատուին կանխիկ վճարելիս կոմիսիոն վճար չի գանձվում:

3.5. Ֆիզիկական անձանց կողմից ներդրվող Բանկի կողմից հայտարարված սահմանաչափից և ժամկետներից ավել ժամկետային ավանդների սպասարկման պայմանները և տոկոսադրույքները

սահմանվում են կողմերի միջև պայմանագրով նախատեսված հիմունքներով՝ Բանկի Վարչության նախագահի կողմից՝ Ակտիվների և պասիվների կառավարման վարչության առաջարկությամբ:

*(կետը փոփ. Բանկի խորհրդի 13.12.2008թ. թիվ 289L որոշմամբ)*

3.6. Իրավաբանական անձանցից ներգրավվող ավանդների սպասարկման պայմանները և տոկոսադրույքները սահմանվում են կողմերի միջև պայմանագրով նախատեսված հիմունքներով: Բանկի կողմից ֆիզիկական անձանց կողմից ներդրվող ավանդների համար հայտարարված սահմանաչափերի և ժամկետների սահմաններում իրավաբանական անձանցից ներգրավվող ավանդների տոկոսադրույքները մասնաճյուղերը և Հաճախորդների սպասարկման վարչությունը սահմանում են ինքնուրույն ոչ ավել, քան ֆիզիկական անձանցից ներգրավվող ավանդների համար սահմանված տոկոսադրույքները:

Բանկի կողմից Ֆիզիկական անձանց ներդրվող ավանդների հայտարարված տոկոսադրույքներից, սահմանաչափերից կամ ժամկետներից ավել իրավաբանական անձանցից ներգրավվող ավանդների սպասարկման պայմանները և տոկոսադրույքները սահմանում է Բանկի Վարչության նախագահը՝ Ակտիվների և պասիվների կառավարման վարչության և Հաճախորդների դեպարտամենտի առաջարկությամբ:

ՀՀ դուրս ոչ ռեզիդենտներից ներգրավվող ավանդների սպասարկման պայմանները և տոկոսադրույքները սահմանվում են կողմերի միջև պայմանագրով նախատեսված հիմունքներով՝ Բանկի Վարչության նախագահի կողմից՝ Ակտիվների և պասիվների կառավարման վարչության առաջարկությամբ:

*(կետը փոփ. Բանկի խորհրդի 13.12.2008թ. թիվ 289L որոշմամբ)*

3.7. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, ֆիզիկական անձ-Ավանդատուի հարկային պարտավորությունները կատարելու նպատակով, Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարից իրականացնում է գանձում՝ համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի:

3.8. Ակտիվների և պասիվների կառավարման վարչությունը եռամսյակը մեկ անգամ Բանկի Վարչությանը ներկայացնում է հաշվետվություն անհատական սակագներով, տոկոսադրույքներով ու սպասարկման պայմաններով ներգրավված ավանդների վերաբերյալ

Սույն կետի 1-ին պարբերությամբ նշված ավանդների վերաբերյալ Բանկի վարչության նախագահը եռամսյա պարբերականությամբ հաշվետվություն է ներկայացնում Բանկի խորհրդին՝ Խորհրդի կողմից հաստատված ձևով:

*(կետը լր. Բանկի խորհրդի 13.12.2008թ. թիվ 289L որոշմամբ)*

#### **4. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

4.1. Բանկային ավանդի պայմանագիրը կնքվում է.

- Ավանդն առաջին իսկ պահանջով վերադարձնելու, այսուհետ՝ «Ցպահանջ ավանդ» կամ՝
- Ավանդը Բանկային ավանդի պայմանագրով սահմանված որոշակի ժամկետի ավարտից հետո վերադարձնելու, այսուհետ՝ «Ժամկետային ավանդ», պայմաններով:

Բանկային ավանդի պայմանագրով կարող են նախատեսվել ավանդները վերադարձնելու՝ օրենքին չհակասող այլ պայմաններ:

4.2. **Ցպահանջ ավանդի դեպքում** Բանկի և Ավանդատուի միջև կնքվում է Ցպահանջ ավանդի պայմանագիր՝ անորոշ ժամկետով, Բանկի կողմից հայտարարված պայմաններով, մասնավորապես.

4.2.1. Բանկն Ավանդատուին տոկոսները վճարում է մինչև Ավանդի վերադարձման օրվան նախորդող օրը հաշվարկված տոկոսներն ամբողջությամբ.

4.2.2. Տոկոսների վճարման պարբերականությունը Բանկում սահմանված է եռամսյակը մեկ անգամ.

4.2.3. Բանկի կողմից Ցպահանջ ավանդի համար վճարվող տոկոսների չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է Բանկի կողմից սահմանված օրվանից: Տոկոսների նոր չափի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հանրապետական մամուլում:

4.3. **Ժամկետային ավանդի դեպքում** Բանկի և Ավանդատուի միջև կնքվում է Բանկային ավանդի պայմանագիր որոշակի ժամկետով Բանկի կողմից հայտարարված պայմաններով, մասնավորապես.

4.3.1. Ժամկետային ավանդի համար սահմանված տոկոսների չափը, որը քաղաքացին ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել: Իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրով կարող են նախատեսվել Բանկային ավանդի տոկոսների չափի միակողմանի փոփոխություններ.

4.3.2. եթե Ավանդատուն պահանջում է ավանդը վերադարձնել մինչև Ժամկետային ավանդի գործողության ավարտը, Բանկը Ավանդատուին տոկոսները վճարում է Բանկում Ցպահանջ ավանդի համար սահմանված չափերով՝ կատարելով համապատասխան վերահաշվարկ, եթե այլ բան նախատեսված չէ Ավանդային պայմանագրով.

4.3.3. եթե Բանկն արդեն իսկ Ավանդատուին վճարել է Բանկային ավանդի պայմանագրով նախատեսված տոկոսները, ապա Բանկը Ավանդատուի ավանդը ժամկետից շուտ վերադարձնելու պահանջը ստանալուց հետո վերահաշվարկ է կատարում և ավանդի գումարից պահում է Ավանդատուին ավել վճարված տոկոսագումարները, այնուհետև վերադարձնում վերահաշվարկման արդյունքում մնացած գումարը.

4.3.4. եթե Ավանդատուն պահանջում է ավանդի մի մասը վերադարձնել մինչև Ժամկետային ավանդի գործողության ավարտը, Բանկը Ավանդատուին, վերադարձման ենթակա ավանդի գծով տոկոսները վճարում է Բանկում Ցպահանջ ավանդի համար սահմանված կարգով և չափերով՝ կատարելով համապատասխան վերահաշվարկ, եթե այլ բան նախատեսված չէ Բանկային ավանդի պայմանագրով: Վերադարձման ենթակա Ավանդի նկատմամբ կիրառվում են սույն Կարգի 4.3.3 կետի կանոնները:

4.3.5. Ավանդի գումարի մի մասի ետ ստանալու դեպքում Ավանդային պայմանագիրը գործում է ավանդային հաշվի մնացորդի չափով, եթե այլ բան նախատեսված չէ Բանկային ավանդի պայմանագրով:

4.3.6. Եթե Ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, ապա այդ գումարը փոխանցվում է ցպահանջ ավանդի հաշվին և հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է տվյալ պահին Բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված կարգով և չափով:

4.4. Ավանդի հաշվում կարող են մուտքագրվել Ավանդատուի անունով երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով, եթե այլ բան նախատեսված չէ Բանկային ավանդի պայմանագրով: Ընդ որում, ենթադրվում է, որ, Ավանդատուն, նման անձանց իր ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալներ տրամադրելով, համաձայնվել է նրանցից ստանալ դրամական միջոցներ:

4.5. Ավանդը կարող է ներդրվել Բանկ **հոգուտ երրորդ անձի**, որի դեպքում Բանկի և Ավանդատուի միջև կնքվում է Բանկային ավանդի պայմանագիր հոգուտ երրորդ անձի՝ Բանկի կողմից հայտարարված պայմաններով, մասնավորապես.

4.5.1. Հոգուտ Երրորդ անձի բանկային ավանդի պայմանագրի էական պայմանը քաղաքացու անվան կամ իրավաբանական անձի անվանման նշումն է, որի օգտին ներդրվում է ավանդը, ընդ որում առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձն իրավունք չունի կնքել հոգուտ երրորդ անձի Բանկային ավանդի պայմանագիր:

4.5.2. Երրորդ անձն Ավանդատուի իրավունքներ է ձեռք բերում Բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ գրավոր պահանջը ներկայացնելու պահից: Գրավոր պահանջ է համարվում ավանդի գումարը կամ տոկոսների ստացումը, ավանդի գումարի վրա լրացուցիչ միջոցների ներդրումը կամ երկարաձգումը կամ ավանդն օգտագործելու վերաբերյալ Բանկին գրավոր տեղեկացնելը: Երբ Երրորդ անձը ձեռք է բերում Ավանդատուի իրավունքներ, ապա համակարգչային բազայում կատարվում է փոփոխություն՝ որպես Ավանդատու ամրագրելով Երրորդ անձին:

4.5.3. Ավանդատուն օգտվում է ավանդի հաշվում իր մուծած դրամական միջոցների Ավանդատուի իրավունքներից այնքան ժամանակ, քանի դեռ Երրորդ անձը Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին գրավոր ձևով չի արտահայտվել.

4.5.4. Եթե երրորդ անձը մինչև Բանկային ավանդի պայմանագրի ավարտը Բանկին գրավոր պահանջ չի ներկայացրել և եթե բանկային ավանդի պայմանագրի ժամկետը լրանալիս Ավանդատուն չի պահանջում վերադարձնել Ավանդը և հաշվարկված տոկոսները, ապա Բանկային ավանդի պայմանագիրը համարվում է հոգուտ երրորդ անձի կնքված Ցպահանջ ավանդի պայմանագիր:

4.5.5. Եթե Երրորդ անձը հրաժարվում է Հոգուտ երրորդ անձի ավանդով իրեն տրամադրված իրավունքներից, ապա այդ իրավունքներից օգտվում է Ավանդատուն ընդհանուր հիմունքներով.

4.5.6. Բանկն իրավունք ունի Երրորդ անձի պահանջի դեմ անել այնպիսի առարկություններ, որոնք նա կարող էր ներկայացնել Ավանդատուին.

4.5.7. Հոգուտ երրորդ անձի բանկային ավանդի նկատմամբ կիրառվում են նաև սույն Կարգի 4.2. և 4.3. կետերի կանոնները.

4.5.8. Հոգուտ երրորդ անձի Բանկային ավանդի պայմանագիրն իրավունք ունեն երկարաձգել սույն Կարգով սահմանված պայմաններով և՛ Երրորդ անձը, և՛ Ավանդատուն (եթե մինչ այդ Երրորդ

անձը Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրություն չի հայտնել): Երրորդ անձը չի կարող Բանկային ավանդի պայմանագիրը երկարաձգել հոգուտ մեկ այլ երրորդ անձի: Նման պահանջ ներկայացվելու դեպքում կնքվում է Հօգուտ երրորդ անձի նոր Բանկային ավանդի պայմանագիր:

4.6. Սույն կարգի իմաստով «համատեղ բանկային ավանդ» է հանդիսանում այն ավանդը, որը ներդրվել է երկու և ավելի անձանց կողմից և նրանց հետ կնքվել է մեկ ավանդային պայմանագիր:

4.6.1. Համատեղ բանկային ավանդի պայմանագրում ավանդատուների համաձայնությամբ կարող են նշվել նրանցից յուրաքանչյուրի մասնաբաժինը, որը կհամարվի որպես յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:

4.6.2. Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդի տնօրինման իրավունքը պատկանում է բոլոր ավանդատուներին, այսինքն ցանկացած գործարք (ավանդը ամբողջությամբ կամ մասնակի հետ պահանջում, ավելացում կամ տոկոսի ստացում և այլն) կատարվում է ավանդատուների ներկայությամբ, ինչը հավաստում է համապատասխան փաստաթղթում յուրաքանչյուրի ստորագրմամբ:

*(կետը լր. Բանկի խորհրդի 13.12.2008թ. թիվ 289L որոշմամբ)*

4.7. Եթե ավանդատուն Բանկում ունի մի քանի ժամկետային ավանդ, ապա այն ավանդի նկատմամբ, որի ներդրման արդյունքում ավանդների գումարը տվյալ պահին գերազանցում է հայտարարված սահմանաչափերը՝ տոկոսադրույքը սահմանվում է պայմանագրային հիմունքներով:

*(կետը լր. Բանկի խորհրդի 13.12.2008թ. թիվ 289L որոշմամբ)*

## **5. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՆԵՐԴՐՄԱՆ, ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

5.1. Բանկային ավանդի պայմանագիրը ստորագրելու և կնքելու համար քաղաքացին Բանկին ներկայացնում է՝

- անձնագիր,
- անչափահաս լինելու դեպքում՝ ծննդյան վկայական,
- սոցիալական քարտ:

5.2. Եթե իրավաբանական անձ ավանդատուն նախքան Բանկում ավանդ ներդնելը Բանկի հաճախորդ չի հանդիսացել, ապա Բանկային ավանդի պայմանագիր կնքելու համար Բանկին ներկայացնում է՝

- պետական ռեգիստրի վկայականի պատճենը.
- կանոնադրության պատճենը.
- քաղվածք գործադիր մարմնի նշանակման և պարտականությունների կատարմանն անցնելու մասին.
- գործադիր մարմնի ղեկավարի անձնագիրը
- Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ղեկավարների ստորագրությունների մուշները:

5.3. Ավանդատուների հետ կնքվելիք Բանկային ավանդի պայմանագրերը նախապատրաստում են Բանկի մասնաճյուղի Պատասխանատու մասնագետները, որոնք Ավանդատուներին ծանոթացնում են ավանդների ընդունման կարգին և պայմաններին, ավանդների տեսակներին, ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին և այլ առանձնահատկություններին:

5.4. Հաճախորդի կողմից ավանդ ներդնելու որոշումը ընդունելուց հետո, Պատասխանատու մասնագետը կազմում է Բանկային ավանդի պայմանագիր՝ երկու օրինակից, որի հիման վրա գլխավոր հաշվապահը /բաժնի պետը/ բացում է համապատասխան ավանդային հաշիվը և հաճախորդին տրվում է մուտքի օրդերը՝ ավանդը կանխիկ մուտք անելու համար:

5.5. Ավանդային պայմանագիրը վավերացվում է միայն հաճախորդի կողմից Ավանդի գումարը մուծելու վերաբերյալ հավաստող բանկային փաստաթուղթը /ստորագրված և կնքված դրամարկղի մուտքի անդորրագիր կամ դրոշմակնքված մեմորեալ օրդեր/ ներկայացնելուց հետո:

5.6. Բանկային ավանդի պայմանագիրը ստորագրվում է Ավանդատուի և մասնաճյուղի կառավարիչի կողմից՝ միմյանց ներկայությամբ: Բացի մասնաճյուղի կառավարիչից, պայմանագիրը պետք է ստորագրվի մասնաճյուղերում Պատասխանատու մասնագետի և գլխավոր հաշվապահի կողմից: Բանկային ավանդի պայմանագիրը ստորագրելուց հետո կնքվում է գլխավոր հաշվապահի կողմից: Նույն արարողակարգը կիրառվում է նաև ավանդային պայմանագրի երկարաձգման դեպքում:

5.7. Հաճախորդների սպասարկման վարչությունում Բանկային ավանդի պայմանագիրը ստորագրվում է Ավանդատուի և Հաճախորդների սպասարկման վարչության պետի կողմից՝ միմյանց

ներկայությամբ՝ վերջինիս տրված լիազորագրի հիման վրա: Եթե Ավանդատուն ֆիզիկական անձ է, քացի Հանախորդների սպասարկման վարչության պետից, պայմանագիրը պետք է ստորագրեն Պատասխանատու մասնագետը և Ֆիզիկական անձանց սպասարկման բաժնի պետը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ Պատասխանատու մասնագետը և Կորպորատիվ հաճախորդների սպասարկման բաժնի պետը: Բանկային ավանդի պայմանագիրը ստորագրելուց հետո կնիքվում է Կորպորատիվ հաճախորդների սպասարկման բաժնի պետը կողմից: Նույն արարողակարգը կիրառվում է նաև ավանդային պայմանագրի երկարաձգման դեպքում:

5.8. Ֆիզիկական անձ ավանդատուների համար կազմվում է «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցման» ծանուցումը երկու օրինակից, որի՝ Բանկում մնացող օրինակի վրա ստորագրում է Ավանդատուն:

5.9. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել, եթե դրա վերաբերյալ Բանկը և Ավանդատուն համապատասխան նշում են կատարել Բանկային ավանդի պայմանագրում կամ Ավանդատուն գրավոր դիմում է ներկայացրել Բանկային ավանդի պայմանագիրը երկարաձգելու վերաբերյալ էլեկտրոնային փոստի կամ ֆաքսիմիլ վերարտադրության կամ հեռախոսազանգի (հեռախոսագրի) միջոցով:

5.10. Բանկային ավանդի ժամկետի երկարաձգման դեպքում ավանդի գումարը կարող է փոփոխվել՝ ավելանալ կամ նվազել: Բանկային ավանդի պայմանագիրը երկարաձգվում է երկարաձգման օրվա դրությամբ տվյալ տեսակի ավանդի համար Բանկի կողմից հայտարարված պայմաններով: Հեռախոսազանգի միջոցով երկարաձգում կատարելու դեպքում երկարաձգվում է տվյալ պահին Ավանդատուի ժամկետային ավանդի փաստացի մնացորդը:

5.11. Ավանդի ժամկետի երկարաձգման դեպքում օրերի և ավանդի դիմաց տոկոսների հաշվարկը սկսվում է երկարաձգման օրվանից ներառյալ:

5.12. Եթե ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը/երկարաձգումը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

5.13. Ավանդատուի և Բանկի կողմից ավանդի գումարը մինչև երեք անգամ երկարաձգելը և/կամ այլ պայմաններ փոփոխելը կատարվում է Բանկային ավանդի պայմանագրով, իսկ երեք անգամից ավել բոլոր հետագա երկարաձգումները կատարվում են Ավանդային պայմանագրի լրացումների հիման վրա:

5.14. Եթե Ավանդատուն ավանդի ժամկետը լրանալուց որոշ ժամանակահատված անց ցանկանում է երկարաձգել ավանդի ժամկետը, ապա սույն Կարգի համաձայն կնքվում է ժամկետային ավանդի նոր պայմանագիր:

5.15. Բանկի կողմից հայտարարված սահմանաչափից ավել գումարով ժամկետային ավանդ ներդրած ֆիզիկական անձ Ավանդատուն պարտավոր է գրավոր ավանդը վաղաժամկետ ետ ստանալու իր մտադրության մասին Բանկին տեղեկացնել առնվազն երեք, իսկ իրավաբանական անձ հանդիսացող Ավանդատուն՝ հինգ օր առաջ:

5.16. Ավանդը, դրա մասը և/կամ դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Ավանդատուն Բանկ է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով և Բանկային ավանդի պայմանագրի իր օրինակով:

## **6. ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՆԴԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

6.1. Բանկի և Ավանդատուի միջև ավանդային գործառնությունները դադարում են՝

6.1.1. Բանկի կողմից Ավանդատուին սույն Կարգով սահմանված պայմաններով ավանդի և տոկոսների վճարման դեպքում /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետ/, երբ Բանկն ու Ավանդատուն պատշաճ կատարել են Բանկային ավանդի պայմանագիրը:

6.1.2. Միատեսակ հանդիպական պահանջով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ կամ որոշված է Ավանդատուի նկատմամբ Բանկի պահանջի պահով /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 426-րդ հոդված/, երբ Բանկի և Ավանդատուի միջև գոյություն ունեն միատեսական հանդիպական պարտավորություններ և դրանք կատարվում են հաշվանցով, որի համար բավարար է կողմերից մեկի հայտարարությունը, եթե այլ բան նախատեսված չէ միմյանց միջև կնքված այլ պայմանագրով:

6.1.3. Ավանդ մուծված հաշվով Բանկի և Ավանդատուի հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի բանկային հաշվի պայմանագրի մասին կանոնների կիրառման դեպքում /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդված/:

6.2. Եթե Ավանդատու հանդիսացող քաղաքացին մահացել է, ապա Բանկը Ավանդատուի օրինական իրավաջորդ է ճանաչում Ավանդատուի այն ժառանգին, որն օրենքով սահմանված

կարգով ընդունել է ավանդն որպես ժառանգական գույք և դրա վերաբերյալ Բանկ է ներկայացրել ժառանգության վկայականը:

6.3. Եթե Ավանդատու հանդիսացող իրավաբանական անձը ճանաչվել է անվճարունակ կամ լուծարվել է, ապա Բանկում ներդրված ավանդի տնօրինման հարցը լուծվում է օրենքով սահմանված կարգով:

6.4. Բանկի և Ավանդատուի միջև ավանդային գործառնությունների դադարումը հիմք են հանդիսանում ավանդ մուծված հաշիվը փակելու համար:

6.5. Եթե բանկային ավանդի վրա դատարանի վճռով տարածվում է բռնագանձում, ապա տվյալ ավանդի հանդեպ կիրառվում են սույն Կարգի 4.3.2, 4.3.3, 4.3.4, 4.3.5 կետերը:

## **7. ԽԻՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ**

7.1. Բանկը Ավանդատուի հետ կնքում է «Բանկային ավանդի պայմանագիր», որն իրենից ներկայացնում է խիստ հաշվառման ձևաթուղթ՝ համարակալված և «պաշտպանված»: Խիստ հաշվառման ձևաթուղթ է համարվում նաև իրավաբանական անձանցից հատուկ պայմաններով ներգրավվող ավանդների համար նախատեսված դատարկ բլանկները:

7.2. Խիստ հաշվառման ձևաթղթերը ենթակա են հաշվառման ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանում դրանց համար նախատեսված հաշիվներում: Դրանք պատվիրվում են Բանկի կողմից՝ տպագրական եղանակով:

7.3. Բանկային ավանդի պայմանագրերի տիպային ձևաթղթերի տեսքը ըստ անհրաժեշտության կարող է փոփոխվել: Ձևաթղթերի տեսքը հաստատվում է Բանկի Վարչության կողմից:

7.4. Ձևաթղթի «փաթեթը» բաղկացած է երկու նույնատիպ, հավասարազոր, նույն թվային համարներով օժտված պայմանագրերի օրինակներից, որոնցում նույնությամբ գրանցվում են Պայմանագրային տվյալները:

7.5. Բանկային ավանդի պայմանագրերի բաշխումը կատարում է Բանկի Ակտիվների և պասիվների կառավարման վարչությունը՝ Բանկի մասնաճյուղերի և Հաճախորդների սպասարկման վարչության ներկայացրած հայտերի հիման վրա:

7.6. Բանկի Ակտիվների և պասիվների կառավարման վարչության կողմից տրված կարգազրկի և հավաստիացված լիազորագրի հիման վրա խիստ հաշվառման ձևաթղթերը Բանկի կամ Բանկի վարչության կողմից սահմանված մասնաճյուղի դրամապահոցից բաց է թողնում Հաճախորդների սպասարկման վարչության պետը կամ մասնաճյուղի կառավարիչը: Մասնաճյուղերում նույնպես Բանկային ավանդի պայմանագրերի ձևաթղթերը պահվում են դրամապահոցներում:

7.7. Ձևաթղթերի հաշվառման կազմակերպումը, պահպանումը և դրանց ամենօրյա բաշխումը Բանկի Հաճախորդների սպասարկման վարչությունում դրվում է Ֆիզիկական անձանց սպասարկման բաժնի պետի և Կորպորատիվ հաճախորդների սպասարկման բաժնի պետի վրա, իսկ Բանկի մասնաճյուղերում՝ կառավարիչների և գլխավոր հաշվապահների վրա: Ընդ որում վերջիններս իրավասու չեն այդ պարտականությունների կատարումը դնել այլ անձանց վրա՝ առանց Բանկի Վարչության նախագահի թույլտվության:

7.8. Ձևաթղթերի հաշվառումը կատարվում է հատուկ մատյանում, որի էջերը համարակալվում են, կարվում և կնքվում: Գործառնական օրվա սկզբում մատյանում նշվում են կատարողների միջև բաշխվող ձևաթղթերի համարները՝ վերջիններիս ստորագրության հիման վրա: Գործառնական օրվա վերջում մատյանում առանձին սյունակներով նշվում են օգտագործված, չօգտագործված և վնասված ձևաթղթերի համարները: Չօգտագործված ձևաթղթերը կատարողների կողմից համապատասխան ստորագրություններով ետ են վերադարձվում սույն Կարգի 7.8 կետում նշված անձին/անձանց:

7.9. Մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը Բանկի Հաճախորդների սպասարկման վարչությունը և մասնաճյուղերը Ակտիվների և պասիվների կառավարման վարչություն են ներկայացնում տեղեկանք՝ ավանդային պայմանագրերի ձևաթղթերի օգտագործման մասին:

7.10. Վնասված, սխալ լրացված կամ այլ կերպ օգտագործման համար ոչ պիտանի ձևաթղթերը ոչնչացվում են Բանկի Ներքին ատղիտի վարչության աշխատակիցների կողմից՝ համալիր ստուգումներ իրականացնելու ժամանակ:

## **8. «ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

8.1. Սույն Կարգը, Բանկային ավանդի պայմանագրերի ձևաթղթերի, դրանք Բանկի անունից ստորագրելու լիազորությամբ օժտված ղեկավարի ստորագրության և Բանկի մասնաճյուղի կնիքի, Բանկային ավանդի պայմանագրեր ձևակերպող Պատասխանատու մասնագետների

«Արդշինինվեստրանկ» փակ բաժնետիրական ընկերության ավանդների ընդունման կարգ

ստորագրության ու նրանց ամրակցված դրոշմի, մուտքի դրամարկղի օրդերի, մուտքի դրամարկղի կնիքային նմուշները, ավանդի տեսակների ու պայմանների վերաբերյալ տեղեկությունները Ավանդատուին հասանելի է դարձվում Բանկի և մասնաճյուղերի վարչատնտեսական մասնաշենքերի գործառնական սրահներում տեղադրված «Ավանդային գործառնություններ» տեղեկատվական ցուցանակների միջոցով:

8.2. Ավանդատուն Բանկային ավանդի պայմանագրում իր ստորագրությամբ հաստատում է գործառնական սրահներում փակցված «Ավանդային գործառնություններ» տեղեկատվական ցուցանակներին ծանոթանալը:

8.3. «Ավանդային գործառնություններ» տեղեկատվական ցուցանակը ենթակա է փոփոխման, եթե փոփոխվում են սույն Կարգի 8.1 կետում թվարկված նմուշները:

8.4. «Ավանդային գործառնություններ» տեղեկատվական ցուցանակի փոփոխությունները ժամանակին ապահովելու պարտականությունները կրում են Բանկի Հաճախորդների սպասարկման վարչությունում՝ Հաճախորդների սպասարկման վարչության պետը, իսկ մասնաճյուղերում՝ մասնաճյուղերի կառավարիչները: